**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2026թվականի N 252 Ա

## *ՀԱՆԳՈՒՅՅԱԼ ՀՐԱՆՈՒՇ ԵՐԱՆ ՄԱՆՎԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի քաղվածքները

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Հրանուշ Երան Մանվելյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0021-0013, մակերեսը՝ 0.046 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 5-րդ փողոց, տուն 3 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Հրանուշ Երան Մանվելյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0018-0032, մակերեսը՝ 0.101 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցքի 2-րդ փակուղի, թիվ 10 հասցեն:

3.Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Հրանուշ Երան Մանվելյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0013-0011, մակերեսը՝ 0.035 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորս գյուղ, 5-րդ փողոց, թիվ 4/1 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. հոկտեմբերի 29 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 253 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ՝ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԿԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 14-ը մայիսի 2024թ. թիվ 44 Ն հրամանի 3-րդ կետի 2)-րդ ենթակետը, 5-րդ կետի 5)-րդ ենթակետը.

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Քարագլուխ, Աղնջաձոր, Թառաթումբ, Շատին, Սալլի և Հորս գյուղերի դպրոցների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման համար առաջադրել Արայիկ Վալերիկի Սիմոնյանի թեկնածությունը:

2.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ, Գողթանիկ, Հերմոն, Հորբատեղ, Եղեգիս և Արտաբույնք գյուղերի դպրոցների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման համար առաջադրել Կարապետ Ալբերտի Շահգալդյանի թեկնածությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 2 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 254 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԵՎ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի դրույթները.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնք, Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող (10-021-0114-0067 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,0536հա մակերեսով, Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի հողամասին) Եղեգիս համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված արտադրական շինությունները (մակերեսը՝ 420,78ք/մ) համարել Եղեգիս համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական (կցվում է շինությունների և հողամասի հատակագիծը):

2.Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2023PF9FEN:

3.Հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 16/10/2026թ. թիվ 71Ա որոշումը սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունները և 0,0536հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ին.

ա)Վճարել ինքնակամ կառուցված 420.78ք/մ արտադրական նպատակային նշանակության շինությունների համար՝ ընդամենը 531024,36 (հինգ հարյուր երեսունմեկ հազար քսանչորս ամբողջ երեսունվեց հարյուրերորդական) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական

արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը:

բ)Վճարելու 0,0536հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի հողամասի արժեքը՝ 116740,8 (մեկ հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր քառասուն ամբողջ ութ տասնորդական) ՀՀ դրամ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի IV. գլխի 33.1. կետի գ) ենթակետը:

գ)Վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

4.Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:

5.Ավագանու որոշման ընդունման օրվանից, ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում նախատեսված գնման նախապատվության առաջարկը չընդունվելու, կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա սպասարկման համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում, նշված կառույցները և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.0536հա հողամասը կվաճառվի աճուրդով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով երկամսյա ժամկետում:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 255 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի IV գլխի 33-րդ, 33.1-ին, 34-րդ, 35-րդ, 35.1-ին և 36-րդ կետերի պահանջները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

**1.**Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական տարածքում գտնվող, 10-021-0023-0019 կադաստրային ծածկագրով, 0.04341 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող՝ 321.62 քմ ներքին (359.10 քմ արտաքին) մակերեսով կիսակառույց անասնաշենքը ճանաչել օրինական՝ ինքնակամ կառույցի հաշվառման **2026Q3GBLT** ծածկագրով հաշվառված տվյալներին համապատասխան:

**2.**Սույն որոշման 1-ին կետով նախատեսված օրինական ճանաչված կիսակառույց անասնաշենքի պահպանման և սպասարկման համար առանձնացված 0.04341 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով իրականացնելով անշարժ գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

**3.**Սույն որոշման 1-ին կետով նախատեսված անասնաշենքի և 2-րդ կետով նախատեսված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո կառուցապատող Գայանե Բայանդուրի Ասատրյանին (անձնագիր՝ AU0314677, տրված՝ 11.06.2021 թ., 037-ի կողմից) ներկայացնել գնման նախապատվության իրավունքով՝ ուղղակի վաճառքով ձեռք բերելու վերաբերյալ գրավոր

առաջարկություն՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով սահմանված ժամկետում և կարգով:

**4.** Առաջարկել կառուցապատող Գայանե Բայանդուրի Ասատրյանին՝

**ա)** Օրինականացված կիսակառույց անասնաշենքը ձեռք բերելու համար վճարել դրա վաճառքի գինը, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի «գ» ենթակետով սահմանված՝ յուրաքանչյուր քառակուսի մետրի համար բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ հաշվի առնելով նույն որոշման 4-րդ կետով նախատեսված տարածագնահատման գոտիականության գործակիցը:

Վաճառքի վերջնական գումարը հաշվարկել՝ հիմք ընդունելով կառույցի արտաքին մակերեսը՝ 359.10 քմ, կիրառելի բազային տուրքը և համապատասխան գոտիականության գործակիցը:

**բ)** Ձեռք բերել 0.04341 հա (434.10 քմ) մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ դրա նկատմամբ գործող կադաստրային արժեքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-ին կետի համապատասխան ենթակետը և 34-րդ ու 35-րդ կետերը:

Հողամասի վաճառքի վերջնական արժեքը որոշել Կադաստրի կոմիտեի տվյալներով՝ օտարման պահին գործող կադաստրային արժեքի հիման վրա:

**գ)** Վճարել համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար մինչև օտարումը կատարված ծախսերը՝ համապատասխան վճարումների անդորրագրերի հիման վրա՝ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35.1-ին կետի համաձայն:

**5.** Սույն որոշման 3-րդ կետով նախատեսված գնման նախապատվության իրավունքի առաջարկն ընդունելու դեպքում կառուցապատողը պարտավոր է առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում վճարել օրինականացված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի վաճառքի ամբողջ գինը՝ ՀՀ կառավարության N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 36-րդ կետի համաձայն:

**6.** Կառուցապատողի կողմից գնման նախապատվության իրավունքի առաջարկն ընդունելու և սահմանված ժամկետում ամբողջական վճարումները կատարելու դեպքում համայնքի կողմից ապահովել օրինականացված կառույցի և դրա սպասարկման ու պահպանման համար առանձնացված հողամասի ուղղակի վաճառքի առուվաճառքի պայմանագրի կնքումը՝ օրենքով սահմանված կարգով:

**7.** Կառուցապատողի կողմից գնման նախապատվության առաջարկը սահմանված ժամկետում չընդունվելու կամ առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում վաճառքի գները չվճարելու դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 36-րդ և հաջորդող կետերի պահանջներով:

**8.** Սույն որոշման կատարման ապահովումը վերապահել Եղեգիս համայնքապետարանի աշխատակազմին:

**9.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 256 Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 28/10/2026 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ, 76-րդ հոդվածների և 78-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 10/09/2026թ. թիվ 67Ա որոշումը, Եղեգիս համայնքի մրցութային հանձնաժողովի 28/10/2026թ. արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0130-0007, մակերեսը՝ 0.03753հա) հողամասը 25 (քսանհինգ) տարի ժամկետով գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված քաղաքացի Սպարտակ Հայրիկի Վարդանյանին:

1)Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 2534 (երկու հազար հինգ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:

2)Տարեկան վարձավճարը սահմանել 3150 (երեք հազար մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը կազմում է տվյալ անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափի 1968 տոկոսը և պետք է մուծվի 900 355 116 055 հաշվեհամարին:

3)Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 262,5 ՀՀ դրամ:

4)Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:

5)0.03753հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 16 ՀՀ դրամ:

6)Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

7)Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 257 Ա

## *ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԱՍՏՂԻԿ ԵՂԻԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Աստղիկ Եղիայի Հարությունյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0039-0014, մակերեսը՝ 0.08981 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 5-րդ փողոց, թիվ 8 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Աստղիկ Եղիայի Հարությունյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0004-0001, մակերեսը՝ 0.09652 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 21-րդ փողոց, թիվ 18 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 258 Ա

## *ԱՐԹՈՒՐ ՍԻՍԱԿԻ ՍՄԲԱՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ*

Եղեգիս համայնքի Հորբատեղ գյուղի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացի Արթուր Սիսակի Սմբատյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-030-0019-0017, մակերեսը՝ 0.305 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Հորբատեղ գյուղ, 6-րդ փողոց, թիվ 2 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 ք. Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 259 Ա

## *ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 63-65-րդ կետը, Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Նաիրա Վարազդատի Ավետիսյանի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր՝ 10-021-0025-0024, մակերեսը՝ 0,143հա) տրամադրել Եղեգիս համայնք, Եղեգիս գյուղ, 5-րդ փողոց, թիվ 22 կիսակառույց հասցեն:

2.Չեղյալ համարել նախկինում տրված՝ «Մարզ Վայոց ձոր, համայնք Եղեգիս գյուղ Եղեգիս 13-րդ փողոց 2» հասցեն:

3.Սույն որոշումը ենթակա է գույքային իրավունքի պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 260 Ա

## *ՍՈՒՐԵՆ ՀՐԱՆՏԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԿԵԿԵԼ ՋԱՆԻԲԵԿԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող, Սուրեն Հրանտի Քոչարյանի (ընտանիքի գլխավորը) և հանգուցյալ Կեկել Ջանիբեկի Դավթյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-007-0022-0001, մակերեսը՝ 0.15 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Աղնջաձոր գյուղ, 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, տուն 5 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 ք. Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 261 Ա

## *ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԷԴՎԱՐԴ ԱԶԻԶԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԵՎ ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԲԱՎԱԿԱՆ ՍԱՄՍՈՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի քաղվածքները.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Էդվարդ Ազիզի Ասատրյանի (ընտանիքի գլխավորը) և հանգուցյալ Բավական Սամսոնի Ասատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-044-0096-0053, մակերեսը՝ 0.146 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ, 1-ին փողոց, տուն 9 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Էդվարդ Ազիզի Ասատրյանի (ընտանիքի գլխավորը) և հանգուցյալ Բավական Սամսոնի Ասատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր՝ 10-044-0093-0015, մակերեսը՝ 0.024 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ, 1-ին փողոց, թիվ 14 անասնաշենք հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 262 Ա

## *ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԱԲՐԱՀԱՄ ՋԱՆՇԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԵՎ ՍԻԼՎԱ ԱԼԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի քաղվածքները.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Աբրահամ Ջանշիկ Հարությունյանի (ընտանիքի գլխավորը) և Սիլվա Ալբերտի Խաչատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-024-0045-0005, մակերեսը՝ 0.115 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ, 13-րդ փողոց, թիվ 20 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Աբրահամ Ջանշիկ Հարությունյանի (ընտանիքի գլխավորը) և Սիլվա Ալբերտի Խաչատրյանի (կինը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-024-0052-0016, մակերեսը՝ 0.093 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ, 6-րդ փողոց, 4-րդ փակուղի, թիվ 2/1 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 263 Ա

***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 28/10/2026 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ, 76-րդ հոդվածների և 78-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 10/09/2026թ. թիվ 58Ա որոշումը, Եղեգիս համայնքի մրցութային հանձնաժողովի 28/10/2026թ. արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0231-0084, մակերեսը՝ 0,95հա) հողամասը 25 (քսանհինգ) տարի ժամկետով գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված քաղաքացի Վահե Եղիշեի Բաբայանին:

1)Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 64125 (վաթսունչորս հազար մեկ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ:

2)Տարեկան վարձավճարը սահմանել 10500 (տաս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, որը կազմում է տվյալ անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափի 2727 տոկոսը և պետք է մուծվի 900 355 120 057 հաշվեհամարին:

3)Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 875 ՀՀ դրամ:

4)Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:

5)0.95հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 385 ՀՀ դրամ:

6)Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

7)Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 264 Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 28/10/2026 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ, 76-րդ հոդվածների և 78-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 10/09/2026թ. թիվ 58Ա որոշումը, Եղեգիս համայնքի մրցութային հանձնաժողովի 28/10/2026թ. արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0231-0086, մակերեսը՝ 0,65459հա) հողամասը 25 (քսանհինգ) տարի ժամկետով գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված քաղաքացի Վահե Եղիշեի Բաբայանին:

1)Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 44210 (քառասունչորս հազար երկու հարյուր տասը) ՀՀ դրամ:

2)Տարեկան վարձավճարը սահմանել 7350 (յոթ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը կազմում է տվյալ անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափի 2763 տոկոսը և պետք է մուծվի 900 355 120 057 հաշվեհամարին:

3)Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 613 ՀՀ դրամ:

4)Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:

5)0,65459հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 266 ՀՀ դրամ:

6)Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

7)Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 265 Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ 28/10/2026 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ, 76-րդ հոդվածների և 78-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 10/09/2026թ. թիվ 68Ա որոշումը, Եղեգիս համայնքի մրցութային հանձնաժողովի 28/10/2026թ. արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-021-0114-0168, մակերեսը 0,31259հա) հողամասը 25 (քսանհինգ) տարի ժամկետով գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալության տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված քաղաքացի Սարգիս Սասնիկի Գաբրիելյանին:

1)Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 21100 (քսանմեկ հազարմեկ հարյուր) ՀՀ դրամ:

2)Տարեկան վարձավճարը սահմանել 4200 (չորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որը կազմում է տվյալ անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափի 3307 տոկոսը և պետք է մուծվի 900 355 113 052 հաշվեհամարին:

3)Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 350 ՀՀ դրամ:

4)Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:

5)0,31259հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 127 ՀՀ դրամ:

6)Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

7)Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 4 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 266 Ա

***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՂԱՍԻ ՅՈՒՐԻԿԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 24/09/2001թվականի թիվ 896 որոշման դրույթները.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի բնակիչ Աղասի Յուրիկի Գաբրիելանին սեփականության իրավունքով պատկանող 10-007-0017-0062 կադաստրային ծածկագրով 0,014հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասում տեղադրել թվով մեկ ժամանակավոր ոչ հիմնական կառույց, համաձայն հաստատված էսքիզային նախագծի:

2.Ոչ հիմնական շինությունները տեղադրել հավաքովի ապամոնտաժվող տարրերից՝ բացառելով շինարարական աշխատանքներում թաց պրոցեսը:

3.Թույլատրել իրականացնել շինությունները տեղանքին կապելու, հողին ժամանակավորապես ամրակապելու աշխատանքներ (տեղադրման հորիզոնական հարթակի ստեղծում, շինության խարսխակապում և այլն):

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 5 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 267 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,40329 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՔՍԱՆՀԻՆԳ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 10-ը սեպտեմբերի 2026թ. թիվ 62 Ա որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքը անհատույց, 25 (քսանհինգ) տարի ժամկետով բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելու «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար, համայնքի կարիքները հոգալու նպատակով.

1)Կադաստրային ծածկագիր 10-041-0201-0252, մակերեսը 0,40329հա, արոտավայր հողատեսք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 5 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 268 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005թ. «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի հողամասին (10-021-0114-0067 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,0536հա մակերեսով) տալ Հայաստանի Հանրապետություն Վայոց ձորի մարզ Եղեգիս համայնք, գյուղ Եղեգիս, թիվ 12 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 5 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 269 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 12.2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասի, 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 102-րդ հոդվածի 3.5-րդ մասի պահանջներով.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.2026 թվականի նոյեմբերի 6-ից Հայաստանի Հանրապետության Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ահարոն Յուրիկի Գաբրիելյանին ազատել իր զբաղեցրած պաշտոնից:

2.Հանձնարարել աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ օրենքով սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 5 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 270 Ա

## *ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՆՈՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ԼԵՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ*

Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող, հանգուցյալ Նորա Հարություն Հայրապետյանի (ընտանիքի գլխավորը) և Լենա Վոլոդյայի Մինասյանի (աղջիկը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-018-0003-0007, մակերեսը՝ 0.33 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Գողթանիկ գյուղ, 4-րդ փողոց, տուն 6 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 5 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, (093) 355759, shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2026թվականի N 271 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի և 102-րդ հոդվածի 3.5-րդ մասի պահանջներով.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.2026 թվականի նոյեմբերի 6-ից Հայաստանի Հանրապետության Եղեգիս համայնքի ղեկավար Արթուր Կամոյի Ստեփանյանի լիազորությունները համարել դադարած:

2.Հանձնարարել աշխատակազմի գլխավոր մասնագետին՝ օրենքով սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2026 թ. նոյեմբերի 5 հ.Եղեգիս